



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material


12043

302

21-12

50241

1000



1000




14-

1631

1622x

Մ Ա Ր Դ

ԻՐԵՆՅ ԳՈՐԾԵՐՈՒ ԶԱԻԱԿՆԵՐԸ



ՀԵՂԻՆԱԿ

ՓԼԱՐԵԹ ԶԱԶԼԸ



ԹԱՐԳՄԱՆԵՅ

N. 189m

ԳԼՈՐԳ ԳՈՒՊԼԻ



1771

ԶՄԻՒՆԻԱ

ՏՊԱԳՐՈՒԹՐԻՆՆ ԵԷՏԷԱՆՆ

1870

UNIVERSITY

LIBRARY

OF THE

STATE

OF TEXAS



1900

AMERICAN

1900

1505

1 DEC 2009
25 SEP 2006

302
8-12 *պր*

Մ Ա Ր Դ

ԻՐԵՆՑ ԳՈՐԾԵՐՈՒ ԶԱԽԱԿՆԵՐԸ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ



ՀԵՂԻՆԱԿ

ՓԻԼԱՐԵԹ ԶԱԶԼԸ

ՍՏԻՍԻՆԱԿ

ԹԱՐԳՄԱՆԵՑ
ԳԼՈՐԳ ԳՈՒԳՂԻ

ա 62 ՆԿ

*1010
40965*



ԶՄԻՌՆԻԱ

ՏՊԱԳՐՈՒԹԵՐՆԵ ՏԷՏԷԱՆԵ

1870

14 FEB 2014

0442

12043

ԱՌ

ՄԵԾԱԳԱՏԻՐ ԼՕՂՈՓԷՔ ՂԱՅԼՕՁԵԱՆ



ՆՈՒԷՐ

ՄՏԵՐՄԱԿԱՆ ՍԻՐՈՅ

Ի ԹԱՐԳՄԱՆՁԷՆ

0781

ՊԱՐՈՆՆԵՐ*

ԺԱՄԵՐ , օրեր , ամիսներ , տարիներ անցան և ժամանակին այն անվերջանալի շղթան կազմող այս իրարմէ փոքր կամ մեծ օղակները մեզի համար մեծ նշանակութիւն չունեցան :

Մինչև ցարդ չեկաւ առիթ մը որ ուշաբրելով հարցնէինք իւրովի թէ ժամանակին այս անջրպետներու մէջ ինչ քայլ առինք , ինչ կրնայինք ընել և ինչ ըրինք , դրեթէ երկար ատենէ 'ի վեր այլ և այլ պատճառներով անշարժութեան դատապարտուած՝ հիմայ միայն հազիւ հազ կ'զգանք մեր ընկերային շահերը պաշտպանել , մեր օգուտը փնտռել : Իրաւ է թէ մեր նախահայրներէն տրգիտութիւն և դողցիս սոհմային և անսպառ գծբաղդութիւն և թշուառութիւն միայն ժառանգելինք ու այսօր թէև նշդեհ , թէև տկար , թէև նիւռն՝ այլ մեր սլարտքն է դարձեալ մեզի յաջորդելիք սերունդներու գէթ աւելի փայլուն ասպաղայ մը պատրաստել և այս պատիւը ստանալու համար դժուարութեանց առջև չ'ընկրկինք : Այն սկսիլ պէտք է , վասն զի ալ ժամանակը եկաւ որ մինչև հիմայ աշխարհի վրայ ծանրացող , մարդկային ընկերութիւնը և մասնաւորաբար մեր ազդը մեռելութեան դատապարտող այն ամեն բնական և բարոյական ախտերը անհետ ըլլան , ալ ժամանակը եկաւ որ աղքատութիւնը , թշուառութիւնը , որոնց կը հետեին անշուշտ ընկեցիկ բարքը , անարդութիւնը և ընկերութեան հիմերը քանդող աւերող տրգիտութիւնը անհետանան , ալ ժամանակը եկաւ որ մօրուսի ամեռակարողութիւնը , ինչպէս ըսաւ Թիւ Սիմօն , վերնալով՝ մինչև ցարդ մեր ազգին մէջ քուրջի տեղ դրուած գեղեցիկ սեռը՝ Նախախնամութեան կողմէն իրեն համար սահմանուած այն սուրբ պաշտօնին դաստիարակելու պաշտօնին մէջ ալ հաստատուի և իր արդար

* Այս ճառը զոր մենք տեղ մը կարդացինք մեծ մասամբ ֆրանսերէնէ թարգմանելով՝ այս անգամ կը փութանք քանի մը բարեկամներու խնդրանօք 'ի լոյս ընծայելու :

Բարիցի բազմարուեստեան ընկերութեան հրապարակախօսութիւնները , որ զատ զատ հատորներու մէջ անփոփելով հրատարակած են ասկէ զատ բազմաթիւ ընտիր ճառեր կը պարունակեն , որոնք մեր ազգին համար խիստ օգտաւէտ կրնան ըլլալ : Եթէ այս անգամ մեր աշխատութիւնը ընդունելութիւն գտնէ , կը խոստանանք՝ ասպաղային այն ճառերուն մէջ ընտրութիւն ընելով՝ թարգմանել և հայ ընթերցասիրաց ուշադրութեան յանձնել :


իրաւունքները վայելէ, ալ ժամանակը եկաւ որ մեր ազգին մէջ ալ լոյսի և մութի, դիտութեան և սողիտութեան, ազատութեան և գերութեան, ազնիւ զգացումներու և յուր կիրքերու մէջ տեղը այն մշտայոյզ, յաւերժական և օգտաւէտ կոխը սկսի, ալ ժամանակը եկաւ որ վշտակիր հայութեան տառապանքները վերջանան և դիտութիւնը, լուսաւորութիւնը կամ գիրքը, գաղափարը ինչպէս կ'ըսէ հեղինակ մը իբր սպեղանի հայ ընկերութեան վերաւոր անդամները բժշկեն. այս միայն մեզի համար պիտի ըլլայ փրկաւէտ ճանապարհ մը: Ա՛յլ մեր մէջէն չ'ուզեր այսպիսի շահաւէտ գործեր աճեռնապիկել, ո՛ր կը խնայէ իւր ժամանակը այդ բանին ծառայելու համար, ո՛ր վատը շղիջանիւր իւր քայլերը այդ վեհ նպատակին հասնելու համար:

Այո՛, ալ պէտք է որ լուսաւորութեան ջանք ձեռք ձգենք զմեզ սպասող անել վեհը ակներև նշմարելու և անկէց իսպառ խորշելու համար:

Պարոններ թէ և լուսաւորութեան շաղկին մէջ քանի մը աննշան քայլեր առած ենք, բայց այդ գործը ՚ի կատար չենք հանած դեռ: Փոքրիկ քայլեր առած ենք կ'ըսեմ ու երջանիկ կը սեպեմ ինքզինքս դիտելու ատեն թէ ասկէ երեսուն կամ քառասուն տարի առաջ Պօլիս, և ուրիշ տեղեր մեր նախնիք այսպիսի ակումբներու մէջ Հասարակ և ժեղ գիշերներու պատմութիւնները միայն կ'ընէին և Աշխարհի մասին Արդար Բանդերի գծադրութիւնները միայն կը լային մինչդեռ մենք Հայաստանի բաղդը միայն կը լանք և մեզի համար ճշմարիտը, բարին, գեղեցիկը և օգտակարը միայն կը փնտռենք: Ինչպէս կը տեսնենք թէ և քանի մը փոքրիկ և աննշան քայլեր առինք, այլ անդին դեռ հազարաւոր մղոններ ունինք և քարուտ, փրշալի, ցաւազին ճանապարհ մը, զոր անցնելու համար փորձանքներ անպակաս պիտի ըլլան: Արկենիք դարձեալ, այսուհետև մեր նպատակը պիտի ըլլայ լուսաւորութիւն, այլ ատոր հասնելու համար թեզի ի՞նչ պէտք է: — Հաստատ կամք, գործ, յարատեւութիւն և անխոնջ աշխատութիւն: Ահա՛ Պ. Ֆիլարեթ Եպիսկոպոս ինտիմ ճառը կարդալով զգալի փորձերով պիտի հաստատենք թէ մարդս այս ամենը ունենալով ի՞նչ կրնայ ընել, քանի քանի խոջնդոտներ կրնայ անդոսնել, ի՞նչ կերպով կրնայ զարգանալ:

Մ Ա Ր Դ

ԻՐԵՆՅ ԳՈՐԾԵՐՈՒ ԶԱՒԱԿՆԵՐԸ



Ա.

ՄԵՐ այստեղ ժողովելուն պատճառը, Պարոններ, դաղափարներու շարժումն է, համակրական հաղորդակցութեանց մէկ պէտքն է, որուն դրդումը ամբողջ Եւրոպայի մէջ, երկրադունդիս ամբողջ երեսը կ'զգան: Անկլիոյ, Զուիցերի, Աւստրիոյ, Ամերիկայի, Միացեալ-Նահանգաց մէջ, ինքնակալութեան, ազնուապետական կամ ռամկավարական երկիրներու մէջ, Բաղմարուեստեան Ընկերութեան նման բանակցութեան տեղերու մէջ կարծեաց այս ազատ փոխանակութիւնը կը կատարուի: Անկլիոյ մէջ ազնուապետութեան և գրականութեան ամենէն մեծ անունները իրենց զխոցածրօ խորհածը և բաղձածը ժողովրդեան հաղորդել անարժան չեն սեպեր:

Բնութեան օրէնքն է, Պարոններ, որ ամեն բան վերստին յառաջ կ'ուգայ, նոր պայմաններ կ'զգենու, կ'այլայլի և կերպարանափոխ կ'ըլլայ: Այս բաղմամբիւ փոփոխութեանց մէջէն է որ Մարդկութիւնը ստանց այս զանազան կերպարանքներէ շփոթելու կը քալէ, կը քալէ անդադար դէպ'ի յաւերժական յառաջդիմութիւն: Հնութիւնը նոր աշխարհին պէս բանակցելու տեղեր ունէր: Պլուտարդ, Օլիւսեղ, Արարիկեան Գիշերներու հեղինակը, Աթենէի, և Լատիոյցի Գիողինէսի պէս թամանակադիրներ կը բանակցէին առեաններու մէջ, ինչպէս մենք որ այսօր կ'սկսինք, ինչպէս նաև Պ. Պապինէինայն երևելի աստեղարաշխին ըրածին պէս, որուն շնորհը պերճութիւնը և ախներ իւր բաղմամբիւ ունկնդիրները հրապարեցին:

Սակայն հիներու մէջ արհեստը ամեն բանէ նախագաս կը սեպուէր՝ ընտիր ձևին սիրահար՝ յատակը չէին քններ բնաւ: Իմաստակները և հռետարները խօսքի արհեստաւորներ և քանդակիչներ

էին , որոնք սնտաի կամ կրթական նիւթի մը վրայ ճառելու քիչ
 հող կը տանէին : Ունկնդիրներու կրթութիւնը կամ տղիտութիւնը
 իրենց ինչ հողն էր . ձեռ , ձեռ միայն իրենց հաստատուն զբաղումը կը
 կը դրաւէր : Առտուն կանուխ փուճ և անհիմն իրերու վրայ խօսողը
 իւր գերիները բարեկամներուն տունը կը խրկէր անանց յիշեցնելու
 համար թէ այս ինչ ժամուն , այս ինչ տեղը սխաի խօսէր և թէ
 կը հրաւիրէր զանոնք դալ և զինքը ծափահարել , համակրական
 ունկնդրութեան մը կեդրոնը կազմել : Այս միջոցին հռետորը բողբ
 մը կամ դերասանի մը պէս հագուելով ու սղուելով շքեղ սափո-
 րին մէջ լեցուն հոտաւէտ իւղը իւր մարմնւոյն վրայ կը թափէր .
 պայծառ և փայլուն անդրիադործութեան վրայ վէտ վէտ ծփացող
 ծալքերու շնորհը և ձեռ զննելով ըստ այնմ իւր վերարկուն չուխա-
 յով կը պատէր : Ծաղիկայ պսակ մը արհեստով կարդադրուած
 մազերը բունած էր դէպ 'ի վեր և փճախօսին առջևէն սրնդահար
 մը կ'երթար , որ իբր զնայուն նուագարանի սահման (Diapason) ի-
 րեն ձայն ու դաշնակութիւն սխաի տար և ինքը ճառելիք նիւթին
 համեմատ ծանր կամ թեթեւ քայլերով անսկիոնը , այն ներդաշնակ
 սարաւանդը կ'ելլէր , ուսիէ իւր ճարտարախօսութեան ալիքը մտադիր
 ունկնդիրներու վրայ իյնային դահավէժ : Իւր շքեղ վերարկուն խը-
 նամով դործուած ծալքերէն շրջապատուելով նաղելի՛ փճախօսը սը-
 րինգին ձայնին ուշադիր , որ իւր առաջին ձայնական արձակումը
 կարդի սխաի դնէր , փճախօսը շնորհալի կայնուածքով մը պահ
 մը միտքը կ'ամփոփէր . յետոյ օգնութեան կանչուած մուսայից
 ներշնչումով լուսաւոր , Բերանը , թեւերը և աչերը մէկէն 'ի մէկ
 քանալով՝ իւր ճառը կ'սկսէր :

Ինչ սխաի ըսէր արդեօք : Իւր ճամբորդութեանց , իւր հմտու-
 թեանց , զիտութեան վիճակին , նորահնար դիւտերու , հայրենեաց
 ապագային վրայօք սխաի խօսէր իւր ունկնդիրներու : Ո՛հ , քաւ լի-
 ցի , այս արարկաները , ամենքն ալ նիւթական շահու տիպարը կը-
 բեղուն՝ և ո՛չ իսկ իւր մտքին առջև կը ներկային : Այս կարևոր
 խնդիրներուն մէջ այն փայլուն և անպատրաստից յօրինուածներու ,
 հռետորութեան այն հրապուրելի ծաղիկներու , այն սրտայոյզ դիւ-

մառնութեանց , այն ներդաշնակ դիւտերու , այն պերճ և վսեմ ճարտարախօսութեանց նիւթ ի՞նչպէս կրնար դանել : Իւր ճառին առարկան ի՞նչպէս աւելի բանաստեղծական էր . Կժխաթ արդարապէս պատժուեցա՞ւ : Ազամեմնոն Իֆիթենին զոհելու իրաւունքը ունէ՞ր : Շնորհալի՛ զբաղում , որ իրեն թող կ'ուտար իւր մտքին ու երևակայութեանը ամեն գանձերը օգնութեան հրաւիրել . հրապարակախօսը իւր յորդաւատ նկարագրին նկարչաց պնակին մէջ զըտնուած ամեն կերպ գոյները տալով՝ իւր հաճոյիցը համեմատ իւր ունկնդիրներու զուարթ կամ ահաւոր սարսուռ մը կ'ազդէր . այնուհետև իւր պերճ և ներդաշնակ հնչումին ձևերու առատութիւնը և շնորհը աւելցնելով այն ուշադիր ունկնդիրները կը յուզէր , որոնք իրենց կեցցէներով և ծափահարութիւններով հռետորին մէջ կենդանի և շնչաւոր արձան մը կ'ողջունէին : Աերպարանող , քանդականման , դուսան , խեղկատակ , այսպէս կ'երևի մեզ նախնի առտենախօսը . Բնութեամբ վէճը սիրող , մարդկութիւնը այն ատեն կեանքի գործնական կողմը երեսի վրայ թողլով և մի միայն գոյութեան հրապոյրը , այսինքն արհեստը իրեն զբաղում ունենալով՝ երևակայական սահմաններու մէջ զգացումներու կոխին և դաշնակութեանց մարտին միայն հանդիսատես ըլլալ կը սիրէր . Իրեն համար յուզիչ խաղ մ'էր այս , ինչպէս նաև շահաւէտ և կարեւոր գործ մ'էր լսել թէ ճերմակը սև էր ու սևը ճերմակ : Աւանդի իմաստակներու այնչափ ճարտարախօս կերպով ճառած մեծ խրնդիրները ասոնք էին :

Նոյն ինքն Ալուտարդ , Մեծն Ալուտարդ , առտենախօս , նրբամիտ դասատու , անցեալին յարած՝ ապագային հաւտացող ստեպ առտանը կ'ելլէր այդպիսի իրերու վրայ ճառելու համար և իր փոքրիկ երկասիրութեանց մեծ մասը սոյն հրապարակախօսութեանց համառօտութիւններն են : Առապաշտութեան վրայօք կը խօսէր բայց իւր խօսքը հողին չէր ուղղեր երբէք , իւր ունկնդիրը կը թել ու մարդել չէր ուզեր բնաւ , այլ անոր հաճելի թուիլ կը բաղձար , սակայն իւր սնուի , բայց ներդաշնակ խօսքերը հրապարակ հանելու առտեն դիտէր նաև թէ Տոմիսիէնի իշխանութեան տակ հռովմա

յեցւոց երկիրը թագուն ատենախօսութեամբ սարսուելով կը դողդոզար :

Գեանափորներու ստորերկեայ աղիքներէն ահեղադոչ ձայն մը կ'ելլէր . քրիստոնեայ նորածին աշխարհին առաջին ճիչը , ճնշեալ ժողովուրդին զարթումը , և սորուկ ժողովուրդին կոխն էր այս : Խօսնակի առաջին ատեանն էր այն , ուր սլարտաւորութեան , օգտակարին և հայրենեայ վրայ խօսեցան : Առաջին անգամ ատենախօսը չէ թէ ականջին , զղայարանքներու կ'ուղղէր իւր խօսքը , այլ իւր սիրան էր որ կ'ուղէր կառավարել և առաջնորդել : Այս ահագին և օղտաւէտ շարժումը , զոր Պլուտարդ հազիւ թէ հասկըցաւ և ճանչելով հանդերձ չ'ուզեց անոր վրայ խօսք բանալ , այս շարժումը այն ծաղկեալ հրապարակախօսութիւններ սլարտնակող ատեանները հիմն 'ի վեր պիտի տապալէր , ուրտեղ ձեին շնորհը , պերճութիւնը և ներդաշնակութիւնը օգտակարին վրայ յաղթանակ կը կանգնէին :

Հեռի' իզմէ , Պարոննե'ր , հնութիւնը անհատութեան զգացումը չդիտցաւ ըսելու զրպարտութիւնը և հայհոյանքը . պատմութիւնը կըրնայ ամենէն օրինաւոր յանդիմանութիւնը ընել այդ զրպարտութեան . Արիստոֆան և Սոկրատ այդ զգացումը վերջին աստիճան կը տածէին , բայց ես կ'ուզեմ ըսել թէ այն ատեն ընդհանրապէս մարդկանց վրայ կ'զբաղէին , իսկ մասնաւորաբար մարդուս վրայ չ'էին զբաղեր երբէք : Մարդս , իւր դործերուն զաւակը , ինքզինքին բաւելով և ուրիշներու նեցուկ ըլլալով , այս անհատութիւնը որ խոչընդոտներով հանդերձ միշտ մեծցած և միշտ զարգացած է նախնեայ ուշադրութեան առարկան չէր եղած բնաւ : Արևելք չէր ճանչեր այս , այն ստրուկ և անարդ հօտին , ամենուն ալ տէրեր կուտար . մարդկութիւնը եղիպտական այն ահագին արձաններու տեղ դրած էր , որուն ամեն անդամները իրարու փակած են , որուն աչերը կենդանութիւն չ'ունին , ապառնի մարդկութեան ստուերադիր : Սակայն Յունաց մէջ Բլաթոնի և Սոկրատի հետ կեանքը կը կազմուի , արձանին անդամները կը բաժնուին , մարդկային ձեւը և յատկութիւնը կ'առնեն . կը դործեն ու մարդս կը ծնի ու անհատութիւն

նը երևան կ'ուղայ : Մարդը կը սիրէ , կը խորհի , կը հաւատայ , կը մտածէ և նոր աշխարհի մէջ կը ծլի ու կը ծաղկի : Իւր անձնական արժեքը ճանչցուած և հռչակուած է Բաղդերու իմաստութիւնը այս սկզբունքին ծանօթութիւնը կ'անմահացնէ իբրև անայլայլելի ստակ սոյն առածը կոխելով . Արչափ կ'արժէ մարդս՝ այնչափ կ'արժէ երկիրը , որչափ կ'արժէ երկիրը՝ նոյնչափ կ'արժէ նաև ազգը : Հոեաորը փուճ և անխմաստ ձայներով ղղայարանքները կը հըրապուրէր , որոնք անդամ մը ցնդելէ յետոյ հետք մը չ'են թողուր . քրիստոնէութիւնը պատասխանատուութեան , մարդկային խղճի և հաւասարութեան գաղափարը բերաւ . այս թանկագին նուաճումներու շնորհիւն է որ արհեստէն գիտութեան անցանք , որ հաճելին թող տուինք օգտակարը ձեռք ձգելու համար : Արհեստին մէջ մեզի գերազայն եղած սովորութիւնները յարգենք , բայց ճանչենք նաև որ Մարդկութիւնը այդ շաղին չհետեւելուն շատ աղէկ բրաւ :

Աստուածաբանութիւնը , որ մարդուս Աստուծոյ հետ ունեցած յարաբերութեանց գիտութիւնն է , փիլիսոփայութիւնը , որ մարդկանց իրարու մէջ գիտութիւնն է իրար հանդիպեցան և մարդկային անհատութեան կարողութիւնը , մարդկային արժանեաց կարևորութիւնը հռչակելու համար իրարու միացան : Արքեպիսկոպոս մը , Ֆենելոն , առաքիլեան առաքիլութեան օրինակ մը և քրիստոնեայ իմաստասէր մը , մարդկային կեդրոնը , անձնական խորհուրդը , մարդուս և իր խղճին կրօնը իմացաւ : Իւր գործերուն մէջէն կարդա՛ դիրք մը , որ այսօր շատ քիչ կը կարդան և որուն անունն է «Եմ քեռորդւոյս խրատներ» , քաղաքական և կրօնական դրակահոլութեան գործ մը . հոն պիտի տեսնես թէ ինչ հաստատ համոզումով , ի՞նչ տրամաբանական կարողութիւնով , ի՞նչ բարձր տեսութիւններով կը յորդորէ մարդուս ձեւին յարդ չ'ընծայելով յատակը փնտուել : Ա՛չ դատարարակութեամբ , ոչ կրթութեամբ և ոչ ալ գործնականով է որ մարդս կրնայ հուսկ յետոյ իւր կարողութիւնը և ոյժը ճանչցնել , այլ իւր հաստատ , անդադար , միշտ զբաղեալ և միշտ գործունեայ կամքովը . հոն է միայն իւր մեծութեան ծագումը և աղբիւրը . կամքը մարդս կ'ստեղծէ : Այս ներքին զօրութեամբ փոթորիկներու , աղքատութեան , պատահարներու , թշնա-

Միներու, նախանձոտներու կը դիմադրաւ, այս զօրութեամբ ամեն խոչընդոտները առաթուր անդոտներով իւր նստատակին կը հասնի:

Այս հզօր մարդերը, Պարոններ, Ճշմարտութեան ճշգրիտ ստացողներն են, ապագային աղնուականներն են անոնք. իրենց մէջ մարդկային արժանիքը և մեծութիւնը կը սբարունակեն: Մեր ապառնի ճակատադրին ճամբայ բացող զինուորներ՝ իրենք են որ ընկերութեան շաւիղը կը հորդեն:

Մեր ապառնի ճատերուն մէջ երկու մեծ անհատութեանց ծնունդին, զարդացմանը, կռիւին, ծաղկելուն, վտեմութեանը և յաղթահակին վրայօք պիտի խօսինք. կ'ուզեմ ըսել Սրբոյն Գրիգորի, իւր դործերու զաւակին, այն մեծ պապին, որ իւր հզօր ձեռքովը Հրոովմը այն փլատակներուն և մոխրի շեղջակոյտէն, անոր դանուած մոլութեան և հեշտութեան ճահիճներէն քաշել հանելով սախպեց զայն փայլուն և փառաւոր կերպով վերածնելու իբր արուհի բնական և բարոյական աշխարհին. պիտի ճառենք նաև Սթիֆընսընի վրայ, որ թէև պարզ դործաւոր, այլ հարուստներու դէմ, աղքատներու դէմ, խորհրդարանի դէմ, ինքզինքին դէմ մարտնչեցաւ և որ ամեն տեղ յաղթանակը կանգնեց:

Այս նկարագիրներու մէջ մարդուս ներքին և բուն արժէքը պիտի տեսնէք. պիտի ճանչէք թէ բովին մէջ զտուող ոսկիին նման մարդկային անհատութիւնը ընկերային անհաստատութեանց դէմ կրօնութեամբ աւելի հզօր եղաւ:

Նախնի ընկերութեան մէջ, ուր անձանօթ էր այն, երկբութեթ և թերանս քանի քանի դժբարութեանց չհանդիպեցան, բայց այն ատենէն 'ի վեր որ հանրապետական գաղափարը, համապարտութեան վարդապետութիւնը և հաւասարութեան սկզբունքը նուաճեցինք՝ բնաւորութեան և հողի կարողութիւնը զարդացաւ, ներքին դաստիարակութիւնը կարելի եղաւ և այս դիւրութիւնները Եւրոպայացիին տուին այնպիսի իշխանութիւն մը, որով կրցաւ զօրութեան իշխանութեան և բաղդի աստիճան մը բարձրանալ և որուն նախնիք չկրցան մատչիլ:

Իրենց դործերու զաւակներն են անոնք որ կեանքի ովկիանոսին

վրայ փոթորիկին դէմ կը մարանչին , ինչպէս Վօսպան և Քոլայեր՝
ասոնք մարդկային աստուածութիւնը իշխանութեան պատուանդանին
վրայ հասուցին : Պատմական ազդի ազդի կերպարանքներու մէջէն
անհատութեան կրած դժուարութիւնները և անոր զարդացումը նը-
կարագրել հետաքրքրական գործ մը պիտի ըլլար , որուն համար
Պլուտարգ մը պէտք էր : Մեր քաղաքական և ընկերային նուա-
ճումներու շնորհիւր այսօր բնագորութիւնը կը մեծնայ ազատ , ուստի
ունինք նաև իրենց գործերու՝ բազմաթիւ զաւակներ , իրենց խղճին
երէցներ : Պարագաներու մնայլին , փոշիին և խոտվայոյզ աղմու-
կին մէջ տեղը խուլ և կոյր ենք ու անոնց քովէն կ'անցնինք ա-
ռանց զանոնք տեսնելու և առանց անոնց ձայնը լսելու : Քրանսայի
մէջէն առնենք երկու նշանաւոր անուններ , մին ցոյց պիտի տայ
մեզ այն սարերը , ուր կրնայ հասնիլ անզուսպ կամբը և միւսը պի-
տիցուցնէ մեզ այն անկարողութեան աստիճանը ուր կը վերջանան մը-
տային և բարոյական այն ամենէն ազնիւ կարողութիւնները երբ ան-
հատութեան մշակումը ձեռնտու չ'են ըլլար իրենց . կուզենք խօսիլ
Օկիւսթեն Թիէրիլի և Պենժամէն Քոնսթանի վրայ :

Առաջինը կոյր , տկար , անզօր , հիւանդոտ , վշտակիր և տա-
ռապեալ , իւր տանջանաց անկողնին ամրապինդ յարած՝ պատմական
մեծ գործ մը աւելցուց իր երկրին մէջ . իւր կեանքը մեր սերունդին
բարոյական տկարութեան գասապարտութիւնն է , ինչպէս նաև
փորձ մ'է թէ մարդս որչափ հակոտակութեամբ նեղուի՝ այնչափ
կը հանդուրժէ , այնչափ կը յաջողի , այնչափ մեծ է իւր յազմա-
նակը : Այս մարդը հիւանդութեան և տկարութեան նահատակը կը-
ցաւ իր մահառանէն օր մ'առաջ իրաւացի փառասիրութեամբ մը
գոչել . «Ըրի իմ հայրենեացս ինչ որ մարդկօրէն կարելի էր ը-
նել . հաշմ զինուորի մը պէս բնութեան այն ինձ առած փոքրիկ
«ոյժը իրեն զոհեցի՝ երջանիկ կը մեռնիմ եթէ կրցայ օդտակար
«ըլլալ :»

Պենժամէն Քոնսթան ճենովացի և կէս Քրանսայի , հարուստ ,
տոկուն , խելացի , տաղանդաւոր , Տիկին Սթաւէի սիրելի , այլ ազ-
գու անհատութենէ զուրկ՝ անկարողութեան կատարողութեանը մէջ ,

Մարդկութիւնը և ինքզինքը ատելով մեռաւ, վերջապէս ինչպէս շատ աղէկ կ'ըսէ զրազէտ մը. «կեանքով չէր ապրեր, այլ կեանքի մէջ կը յօրանջէր:»

Հակառակութիւնը ընտիր դպրոց մ'է. կռիւի մը կ'ստիպէ այն զմարդ, որուն մէջ յաղթութիւնը դործունէութեան կը պատկանի. կը բռնադատէ զանի օգտակարը բնութելու և այս է որ Արիստոֆան, այն տեսլականին բարձրացող Մովսէսը, այն կրկին Շեքսպիրը հասկցած էր. կ'ուզէր մարդկային անհատութիւնը արթնցնել մերթ ներդաշնակ քնարին շեշտերով, մերթ իր անհաշտ և անողոր երգիծաբանութեան մտրակովը: Ինքն էր որ իմաստակները ծաղրելով՝ հետևեալ խօսքերը իրեն ժամանակակից երիտասարդներուն կ'ուղղէր, զորս հոս կը կրկնեմ: «Նկէ՛ք և ՚ի միասին խօսակից ըլլանք ազատ: Հինօրեայ քաղաքին դղրդական և աղմկալի «տուները թող տանք. պատերէն դուրս ելլենք. երթանք և աստուածներու կեանքին վրայ խօսինք, զոր սիրել պէտք է ինչպէս «նաև սիրելի հայրենեաց: Խօսակցինք, այլ ազատ, չէ թէ հիւսուամին և փոշիացած գիրքերու մէջ թաղուած կնճռոտ ճակատով «մը: Հոն ձգենք երկայրի խօսքերը: Գեղեցիկ խօսողներ պատ- «րաստե՛լ: Ինչի՞ կը ծառայէ այդ կ'աղաչեմ: Նուրբ ճարտարամի- «տութիւններէ հեռի՛ և փաստաբաններու պէս թել մը տասի «բաժնել չ'ուզենք: Երիտասարդութիւն, զուարթ բնութիւն, ա- «ռողջութիւն, ոյժ, արիութիւն, այս գեղեցիկ զանձերը պահենք, «զորս իբրև բաժին մարդս կ'ընդունի, մարդս այն աստուածներու սիրելին, ո՛վ բարեկամներ:»

Բ.

Մեր վերջին ճառին մէջ, Պարոններ՛ր, Արիստոֆանը հնու- «թեան իբր ամենէն հզօր անհատութեանց մին ներկայացուցինք: Այս մեծ բանահիւսին զրական տեսութիւնը պարզ, անկեղծ, ու- «ղիղ և իմաստակութեան թշնամի էր, իւր գիտողութիւնը կատար-

եալ, խորին, կարի շատ էր, արտաքին կերպարանքին առջև կանգ
 չառնելով հետաքննին և փնտռող էր : Մերթ ընդ մերթ բանա-
 հիւսին վրիժական սրամտութիւնը արդարութեան և ընտիր ճաշակի
 սահմանները անցնել կ'ուտար իրեն : Սովորատի դէմ իւր յարձա-
 կումները հռչակաւոր, այլ ցաւաղին փորձ մը կ'ընծայեն մեզ : Իւր
 բուն, ուժղին ու եռազնուն բնութեամբը մոլեղին՝ հարուածները
 չ'չափեց : Հեղեղութիւնը զրպարտութեան դարձաւ, կ'ուզէի ըսել ա-
 նուն աղարտելու : Ալ յարձակելով դո՛հ չ'եղաւ, այլ դրեթէ ամ-
 բատանեց և իմաստասէրին մահը յաւիտենական խղճի տաղնապի
 մը պէս իւր աչառ թշնամիին յիշատակին վրայ ծանրացած է : Սա-
 կայն եթէ բան մը կրնայ անոր յանցանքը ներելի ընել կամ դէթ
 նուազել այն է նոյն իսկ իւր ասելութեանը բարեմտութիւնը :

Մահաբեր զառիվայրի մը վրայ տեսած Յունաստանի կորուստէն
 վախելով կամ զայն նախատեսելով, իւր հայրենեացը ճշմարիտ
 բարեկամ՝ այն ամեն բանը, որ իրեն սիրելի եղած աւանդութեանց
 ստառնալիք մ'էր՝ կը հարուածէր : Ասիկա ալ իրեն քով անհա-
 տութեան յորդութիւն մ'էր :

Սեն-Սիմօն, ասի ալ տոկուն մարտիկ մը, Սեն-Սիմօն արիա-
 սիրտ և խիստ, Տէրութեան ինտամակալին բարեկամը, այն հեղա-
 համբոյր բնաւորութեան տէր անձը, եթէ ներելի է ըսել Խնամա-
 կալութեան հանդերձեալ և զիմակաւոր պարահանդէսին մէջ ան-
 ընդհատ տեղի ունեցող շուայտութիւններէ դայթակղած, Սեն-Սի-
 մօն կը յուզուէր, կը սրտմտէր և պղնձեայ տառերով պատմու-
 թեան մէջ արդէն առակ նշաւակի եղած իւր ժամանակակիցներուն
 ճակատը իւր բարկութեան սաստիկ դրոշմները կը տեղաւորէր : Ինչ-
 պէս այս խիստ և անաչառ մարդատեացը կրցաւ ցրտորէն խօսիլ այն
 արքունեաց վրայ, ուր կը ախրէր Տիւպուա, այն սպասաւոր պաշ-
 տօնեայն, այն շնական կարդինալը, 1807 դարու քաղաքականու-
 թեան այն ամօթը և նախատիւքը :

Սեն-Սիմօնի համեստ անհատութիւնը, այն հզօր բնաւորութիւ-
 նը այս հանրական վատութիւններէ վրէժը կը լուծէր իւր ժամանա-
 կադրութիւններովը : Ապագայ սերունդէն հաստատուած ահաւոր
 դատակնիք :

Բայց, ափսո՛ս, Պարոննե՛ր, բարին առանց չարի չերթար և եթէ հայրենիքի և ճշմարտութեան սէրը Արիստոֆանը ստիպեցին Սոկրատի դէմ ըրած յարձակումներու մէջ ծայրը փախցնել, նոյնպէս Սէն-Սիմօն արդարութեան և պատիւի վրայ ունեցած գաղափարներովը հանդերձ՝ պարտաւոր էր անոր նման մարդկային տկարութեան իր տուրքը վճարել: Իր դուքսի տխողոսէն հպարտ և սէգ, կնիք կրող ազնուականութեան եռանդուն սիրահար, 1807. դարու այս ժիււլեհալը (Juvénal) թէև մոլութեան և զեղծումներու դէմ զինեալ՝ չափազանց ազնուապետական տենջանքին համար չկրցաւ ծաղր ու ծանակ ըլլալէ զերծ մնալ:

Նոյն ինքն Մոլիէր, Մեծն Մոլիէր, Մարդասրէպցին մէջ ուղած էր մարդիկը ձևի ստութենէն հեռացնել, որ իրողութեան ստութիւնն ալ է, ինքը Լուի ԺԳ. ի առջև խիստ նուաստ, խիստ անարդ և խիստ փաղաքուշ չէ՞ր:

Մարդկութիւնը մեղանշական է: Սակայն ինչպէս կ'ըսէ Սուրբ մը «Մեր մեղքերը չեն որ զմեզ կը դատապարտեն, այլ մեր առաքի՜նսութիւններն են որ զմեզ կը փրկեն»: Թոյլտուութեան գեղեցիկ խօսք, որ զմեզ կ'ստիպէ մարդկութիւնը սիրել և չարը սատել:

Թող կենսադիրները պատմութեան խորերէն քաղուած այս դասը չմոռնան երբէք. քնասորոսիանը յաջողութիւնը կ'ընէ կամ կ'արգիլէ. հոն է ընկերութեան վրայ իրենց ունեցած ազդեցութեան գաղտնիքը և աղբիւրը: Մարդկութեան եռանդուն և դրեթէ մթին մէկ բարեկամը, իր ժամանակակիցներու քիչ ծանօթ կենսադիր մը, որ քաղաքապետական երկրորդական պաշտօն կը վարէր, այլ հզօր և պատուաւոր անհատութիւն մը, հաստատ և ուժգին բնաւորութիւն մը, բարակ և աղէկ մխուած պողովատէ կամք մը, կենսադրութիւններ գրեց, որոնց ազդեցութիւնը նոր աշխարհը շինեց: Այո՛, Պլուտարգ, արդէն զինքը յիշեցինք, Պլուտարգ Ժան-Ժաք Ռուսօյի և Քէննինկի խօսքին համեմատ աշխարհը ըրաւ:

Անոր այնչափ հզօր կերպով քննութեան առած նշանաւոր օրինակներուն հետեւելով է որ արդի ատենին մէջ բազմաթիւ մարդիկ ընկերութեան ստորին և խոնարհ աստիճաններէն իշխանութեան,

մեծութեան, բաղդի, հռչակի գաղաթները հասած են :

Անկլիոյ մէջ մօտերս նոր Ալուտարդ մը մեռաւ : Մարտի 17 արջ դարացի կերպով հռչակաւոր կենսագրութիւններով տմենէն հզօր ամենէն գեղեցիկ ու գիւրին կերպով իւր երկրին վրայ ներդրուեց :

Ինչ աղէկ գիրք մը կար շինուելու : Մարդկային անհասարակութիւնը քննել, անոր ծագումը նկատել, անոր մթերանոցներու ուղղադիմել հշանակել, իր զարգացումներու մէջ հետեիլ, իրեն անգոսնած խոչընդոսները թուել, իւր փառաւոր յաղթանակները, իւր բաղնաթիւ պարտութիւնները և նոր աշխարհի մէջ իր փառաւոր և առատ բարգաւաճումները ըսել : Այս ծանր և վսեմ գործին համար Քրանսայի Ալուտարդ մը ուր^ժկրնանք դանել :

Չեղի օրինակ առէք Ասիան, մարդկութեան խանձարուրը. անտէք այն թանձր և խառն 'ի խուռն զանգուածները, այն սև ու անարդ հօտը : Մարդս ինքզինքը չ'գիտեր հոն : Այս դձուձ շեղակոյտին մէջէն իմացականութեան մէկ աղնուակներ, այս տղէտ ամբոխին մէջէն ամենէն լուսաւորը, Ամենփիսի օրով Իզիսի քրմապետը ընտրէ', իր ժամանակին աղնուապետականութիւնը կը ներկայէ, ինքն է որ փուրքերը շինող այն տխմար ասրուկը կ'առաջնորդէ ու կը վարէ. Քրիստոսէ առաջ եօթերորդ դարուն այդ գիտնականին հարցուփորձ ըրէ : Մարդկային արժեքին և արժանիքին, սկիզբ մը ընելու համար մարդուն ունեցած իրաւունքին վրայօք խօսէ և իր գիտութիւնը այս իրերու մասին լուռ պիտի կենայ, զորս չ'գիտեր :

Աարդապետութեան աւանդապահ, ուխտով ինքզինքը հաւատոյ նուիրած՝ այս քրմապետը ո՛չ խնդրէ մը լուծել գիտէ, ո՛չ դատողութիւն ունի և ո՛չ ալ տեսականութիւն. իւր գործերը բարբարոս կամ ծաղրելի են. իւր միակ օրէնքը կուր հնազանդութիւնն է : Մարդ մը չ'է այն :

Սև անտառին գիւղացիին հետ բաղդատէ՛ զանի : Անդունդ մը զիրենք կը բաժնէ :

Մուսալի սահմանները հովիւ մը տեսած ըլլալս կը յիշեմ որ բողոսն լեռնցի մը, մաքուր, քաղաքավար, քաղցրաբարոյ մէկն էր :

պարզ և յստակ կերպով կը խօսէր, խոր դատողութիւն մ'ունէր, ընտանիքը կը սիրէր և ամենէն մաքուր ու պատուաւոր զգացումներով համակուած՝ համայն բնութեան ազնուականութեան մէջ մարդկային անհատութիւնը կը ներկայէր :

Բաղմատիւ ընտանիքի մը տէր, վասն զի ժողովրդեան աճումէն այնչափ յանիրաւի վախցող լուսաւորութեան այն նախապաշարումէն զերծ մնացեր էր, ընդհակառակն իւր զուակայ թիւին մէջ հարստութիւն մը տեսնելով այդ մարդը, երբ հարցուցի թէ իւր ընտանիքին ապրուստին համար ի՞նչ հասոյթ ունէր տարին, ինձ պատասխանեց թէ կրնար դրեթէ տարին քսանըջինգ զաղղիական Ֆրանք վասակիլ : Իր հարստութիւնը իր դաշտն էր, իր հունձքը, իր ճարտարութիւնը : Իւր հիւղին մէկ անկիւնը, որուն մաքրութիւնը միակ զարդն էր, նուազարան մը կախուած տեսայ : — Այդ գործիով «ի՞նչ կ'ընես, ըսի իրեն : — Ատով կը նուազեմ, կիրակի օրը «սաղմոսը երգելու ատեն. դաս կ'ուտամ և իմ աշակերտներս կաւրագ, հակիթ ևն. կը բերեն ինձ : Երդուեալ արդաչափ, ինչպէս «նաև տաճարին մէջ ձայնաւոր եմ, ուր Պոքերինի, նուազարանի «դաշնակութեան Պելինիին գեղգեղանքը հնչեցնելով հաճոյք կ'ազգեմ իմ հողոյս » :

Ուզելով այս եռանդաղին տեսութիւնը երկարել այս բարի լեռնցիին որոշեցի հարցնել թէ իր կառավարութեան հետ իւր քաղաքական յարաբերութիւնները ի՞նչ էին : Իմ հարցումիս միտքը հասկցնելու համար Աստուած դիտէ ի՞նչ դարձուածներ գործածել ըստիպուեցայ : Ահաւասիկ իւր իսկական պատասխանը. «Եթէ ընդհանուր գործ մը, ինչպէս ճամբու մը շինութիւնը, մեր ուշադրութեան ընծայուի՝ ամեն երևելիները որոնք ինձի պէս բոկոտն են, դիւղին իջեանը կը ժողովին և հոն ծխափողով մ'ու մեծ դադաւածով մը սպառազէն կը ծխեն ու քիչ քիչ կը տնկեն, այնուհետև առարկուած իրին առաւելութեանց և անպատեհութեանց «վրայօք կամաց կամաց ու երկարօրէն կը խօսին և իրենց որոշումը «դիւղապետին կը հաղորդեն : Եթէ մեր երկրէն մէկը գէշ վարուի՝ «քաղաքային զինուոր կամ օստիկան չունինք զանի բունելով բանա

«դնելու • ամենքնիս մէկէն ոտք կ'ելենք երբ յանցաւորը չարութեան»
«մենք ալ համբերութեան սահմանը անցուցած ենք՝ և կստիպենք
«զանի առանց ուժդնութեան, բայց միահամուռ՝ մեր երկիրը թող
«տալով Սթութկարտ ապաստանիլ» :

Այսպէս է որ հզօր անձնաւորութիւն ունեցող այս գիւղայինե-
րը Վիւրթենպերկի թագաւորին նկատմամբ ակնածալի, զոր կը
յարգեն առանց զինքը ճանչելու թէ և անոր հարկահանները կը
ճանչեն՝ այսպէս է որ հուսկ յետոյ կըրցած են բնիկ քաղաքապե-
տական կառավարութիւն մը հաստատել :

1010
40965

Եւրոպայի մէջ, Ամերիկայի մէջ մարդկութիւնը ամեն օր կը մեծ-
նայ • գիւցազնութիւնը, ուղղամտութիւնը, քաջասրտութիւնը, տա-
ղանդը էն նուաստ վիճակի անհատներէ երևան կ'ելեն և ընկերու-
թեան յետին աստիճաններէ այնպիսի զօրութեամբ և առաքինու-
թեամբ լի մարդերու ելելը կը տեսնենք, որոնցմէ զուրկ էին նոյն
իսկ հնութեան իշխանները :

Անկլիական բարքը և սահմանադրութիւնը, որոնք Ֆրանսայի
մէջ այնչափ քիչ ճանչցուած կամ այնչափ գէշ մեկնուած են,
այդ կողմն այն հզօր անձնաւորութեանց ծնունդ տալու յարմար
տեղ մ'ըրած են : 1688էն 'ի վեր, անկէ առաջ ալ Անկլիան եր-
կու ազնուապետականութիւն ունի • մին հողատէր, կալուածատէր և
ժառանգական, միւսը իւր մեծութեան ճշգրիտ աղբիւրը՝ արժողու-
թեան, գիտութեան, տաղանդի վարձատրութիւնը և պսակն է :
Այս ազնուականութիւնը դժուարաւ կրնայ ձեռք ձգուիլ և ճշմարիտ
արժեք ունեցողին միայն կը տրուի : Պարզ տարազագործ մը Ռո-
պերթ Բիլ, պարզ դաստիարակ մը պաշտօնեայ՝ Քաննինկ, կար-
գալ գրել չգիտցող գործաւոր մը Սթիվընսըն կատարելագործուած
շոգեշարժ մեքենային հնարիչը, ուրիշներու հետ այս մարդերու ա-
նուններն են, որ իրենց աշխատութեամբը իրենց երկրին ազնուա-
պետականութեան մասնակցելու արժանի եղան :

Անձնական մշակումը, բնաւորութեան ազնուութիւնը, անձնաւո-
րութեան զօրութիւնը, մրցումով և կռուով լի կեանքը, հանգստու-

Թեան արհամարհանքը այս և օ մարդերը կ'ստեղծեն :

Ա եցերորդ դարուն Գրիգոր Ա. պապ և սուրբ, յետին կարգե-
քու մարդերէն ըլլալով, միշտ կուռող, միշտ կաննդուն՝ իւր բնա-
ւորութեան ոյժովը միայն Առնպարտացիները և Աթաղիները կը խո-
նարհեցնէ, Հռովմի հինօրեայ ծերակոյտին յետին հետքերու ըս-
տուերը անդամ կը ցրուէ, Հռովմը կ'ստիպէ իւր ընկղմած մոխրի և
մոլութեանց շեղակոյտէն դուրս ելելու, ժանտախտին և չքառու-
թութեան դէմ արիաբար կը մարտնչի, կարդինալներէ ծերակոյտսը
կը դումարէ և պապերու այն իշխանութիւնը կը հաստատէ, որ
այնչափ երկար ատեն Ներուպայի վրայ իշխեց յազթական : Գրիգոր
իւր կեանքը կուռելով, գործելով, խօսելով, մարտնչելով, դրելով
անցնելէ ետքը կըրցաւ գոշել : «Նշխատեցայ և յաղթեցի : Օրհ-
նեալ ըլլայ Աստուած : Յաղթութիւնը Աստուծոյ կը վերաբերի .
ճարիասիրտ մարդիկ թող օգուտ քաղեն ասկէ :»

Արդի ատեններս, նուաստ գործաւոր մը իւր կամքին ոյժովը միայն
աշխարհիս մէջ մեծ յեղաշրջում մը պիտի կատարէր :

«Երիկուն մը Սթիվընսըն, կ'ըսէ իւր վարուց պատմադիրը, այն
փոքր զսպունակը դտաւ, որ իւր մեքենան պիտի շարժէր, տասնը-
վեց տարեկանէն՝ ի վերատոր կ'աշխատէր ստորին գործաւոր, աղքատ,
անկուրի, երկար և նեղ փողոցի մը յատակը տրտմալի և տխրական տան
մը մէջ բնակելով, կըրցած ատենը իւր պիտոյից պէտք եղած նիւթե-
րու գինը վճարելու համար քեանի մը մէկդի դնելով, շոգեշարժ մե-
քենայի մը կատարելագործութեան աշխատելով, որ Աստանալին
Պերփերուժենի օրով կար՝ հուսկ յետոյ խնդիրին վերջնական լու-
ծումը դտած էր : Սրտայոյղ, գողգոջուն, անձկալի իւր գիւտին՝
փորձառութիւնը բաղձալով և անկէ վախելով՝ Սթիվընսըն մտա-
խոհ, հոգած իւր ձեռքին մէջ մարդկութեան ապագայն կը բռնէր .
տասնևութը մասնաչափ փոքրիկ մեքենան հոն էր իւր ածուխի կառ-
քին հետ կը տաքնար, կը ծխէր, կ'աղաղակէր, կը սուլէր, կը
խորդար, փողոցէն վար կ'իջնէ և իր շոգեկառքը երկաթներու

վրայ կը դնէ , որոնց վրայ մագլցելով պիտի քալէ : Մոսկալի վայրէ
կեա՛ն , պիտի քալէ , չ՛պիտի քալէ : Նոյն պահուն , աղիողո՛րմ գու
շակ , նեղ փողոցին վերևը քարողիչի մը խոժոռ դէմքը կ'երևի ,
որնոր հազիւ իւր քարողը լմնցուցած ըլլալով՝ ետ կը դառնար օ
Ի՛նչ հող , ալ երկրայիլը անհնար էր , անստուգութիւնը և սպա
սելը անյաջողութենէն աւելի դժնդակ և անտանելի են : Բազդին
անձնատուր՝ Սթիվընսըն կը խոնարհի , մողական զսպանակին կը
դպչի , մեքենան կը սուլէ , կը դողայ , կը ծխէ և կայծակի արա
գութեամբ փոքրիկ զառիվերի աստիճաններէն վեր ելլելով՝ կեր
թայ քարողիչին սրունքին զարնելու : Յաղթութի՛ւն , յաղթութի՛ւն
աշխարհի կերպարանքը պիտի փոխուի : Ի զուր քարողիչը իւր վի
րաւոր , ջախջախուած ոլոքներով՝ կը դռչէ . Ի քաց քնա՛ յինէն օա
րանայ : Խնդիրը լուծուած է . ներկայն և ապագայն անցեալին զար
կին և այս կռիւէն , այս հարուածէն այն փառաւոր գործաւորին օ
Սթիվընսընի հզօր անձնաւորութեան ստեղծած նոր աշխարհը պիտի
ծաղի օ՞

(Faint, illegible text, likely bleed-through from the reverse side of the page)

ԻՄ նախորդ բանակցութեանս մէջ քահանայն անցեալին ներկայացուցիչը, ապագային առաքեալին Սթիվընսընի դիմացը դնելով չուղեցի բնաւ բողոքական խիղճը վերդուել, միայն կ'ուզէի ըսել ՍուրբՅովհաննէսի հետ թէ օրէնքի և իրաւունքի Աւետարանին պաշտօնը լրացուցած ըլլալով՝ մեզ կը մնար ապագայինը կատարել, այսինքն սիրոյ Աւետարանը, բառին ամբողջ նշանակութեամբը: Աւղեցի ըսել թէ Սթիվընսըն շարժումի և ապագային խորհրդական նշանն էր, ինչպէս կրկնակնիք քահանան հին դաղափարին մէջ պարունակուող անէծքի և ատելութեանն էր: Ամեն մէկուն երախտապարտ պէտք ենք ըլլալ իւր գործերուն համեմատ և կը խոստովանիմ բերկրալե թէ հարիւր յիսուն տարիէ աւելի է, 1684 դարուն կէսէն մինչև 1804 դարը կրկնակնիքները (anabaptiste) իմ սիրած ողին ներկայացուցին, զոր յայտնել կը նկրտիմ: Խղճի տէր, շարիքին դիմադրաւելով, ընտանիքի ներքին ողուով վառ, առանց ետութեան, ամենուն համակրութիւնը շահած՝ չ'ենք մոռնար որ անոնք Քրիստոսի ճարդէիլ արտադրեցին, զորս Պոսիւլէ այնչափ ամբաստանած և որոնց վրէժը Ապլթեր Սքոթ այնչափ աղէկ լուծած է: Անհատութեան կողմնակիցներ՝ իրենց գործերու զաւակներն են, այլ այսօր անցեալը կը ներկայեն. Սթիվընսըն ալ իւր գործերու զաւակը մարմնացած ապագան է:

Նորտեմպրըրլանտի մէջ գործաւորներու աղքատ ընտանիք մը կ'ապրէր, որոնք հանքային ածխահաներու մէջ պաշտօն ունէին, այն տարօրինակ շեղակոյտը որ ջրհեղեղէ առաջ աշխարհի արդիւնքը ըլլալով մարդս այնչափ օգտակար ըրած է, այնպէս որ գործատուներու հարստութեան առատ աղբիւրը եղած է: 1781 Յունիս Թին կամ 10ին այդ խեղճ ընտանիքը տղու մը աշխարհ դալը տեսաւ որ հաւանական կարծիքով միևնոյն հէղ վիճակը պիտի ունե-

նար : Աեանքի ուկիանոսին վրայ նետուած բովազործ մ'ևս պիտի
 ըլլար որ կոյր հայրէ մը զատ նեցուկ չունի և մայր մը, որ իրեն
 լոյս տալէն քիչ մ'ետքը կը մեռնի : Աղքատ դիւղի մը մէջ քաշ-
 տուած, այն սև, տխուր և սգալի խորճիթներու մէջ՝ այս տղան որ
 ածխագործներու տրտմալի ասպարէզէն զատ ուրիշ ակնկալութիւն
 չունի՝ Առլթերի և Ֆրեաների պատրաստած դիւտերու և կաղնու-
 թեան այն մեծ դարին շունչը պիտի զգար : Գէորդ ցնորքներով,
 խորհուրդներով, տարօրինակ կարծիքներով, սնտաի և խափուսիկ
 յոյսերով համակուած էր, վասն զի բնագոյում մը կ'զգար թէ յու-
 սալը սիրել է և սիրելը ասորիլ : Մեր վեհանձն հայրերուն պէս վե-
 ղանորոգումի կը հաւատար տիրումէն, տարածութիւնէն զատ ուրիշ
 ոյժ չէր ձանչեր և շահընկալութիւնը կը դատապարտէր, որուն մա-
 հարեր հետեանքները այսօր մեզ կ'սպառնան : Այս առատ շունչը որ
 ժան ժաք Ռուսոյի տենդային հողին ողևորեց Սթիվենսընի հողւոյն
 ալ կենդանութիւն կ'ուտար :

Զօշաքաղ և շնչին խանձարուրէ շրջապատուած այս տղան աշ-
 խարհս կերպարանափոխ պիտի ընէր :

Իւր հայրը և մայրը բարեպաշտ, զղօն և համոզուած բողոքա-
 կաններ էին, որոնք կանոնաւոր կերպով եկեղեցի կ'երթային՝ կաղօ-
 թէին ջերմեռանդ, զաղղիական տասներկու փողով միայն կ'ապրէին
 և հացէ զատ ուրիշ բան չէին ուտեր, իսկ միայր բնաւ կամ խիստ
 քիչ անդամ կ'ուտէին :

Մինչդեռ Գրանասայի մէջ Տիկին Բօնբաստուրի, Տեֆանի և Օ-
 բիորդ տը Լեսքինասի, այն եռայարկ սիրտ ունեցող այդ բարոյա-
 կան կալուածատէրին պերճ և աղնուապետական սալճնէրու մէջ
 պատրիկեան, իմաստակ և արուեստական աշխարհը կը ներկայացնէին
 Առլթերի սատանայական և հզօր ժպիտով ողևոր, լուսաւորութեամբ
 շքեղ և ժան-ժաքի խօսքովը սիրուած ու խռովայոյզ՝ մինչդեռ այս
 զաղղիական և մանաւանդ փարիզեան սալճնէրու աշխարհը մօտակայ
 յեղաշրջումի մը աղմուկովը կը յուզուէր՝ Եւրոպայի մէջ համակրա-
 կան մեծ շարժում մը կը կատարուէր : Լիվորբուլի նաւահանգիստ

ար Ամերիկայի բամպակները կ'ընդունէր, Մանչեսթերը անոնցմով կը-
տաւ կը գործէր, Վրայլմը (Vrylme) Մանչեսթերի այրելի նիւթ
կը ճարէր, որնոր իւր ձեռագործի արդիւնքները Վիվերբուլ կը
դարձնէր, ուսկէ երկրադունդիս ամբողջ երեսը կը տարածուէին :
Ժողովրդեան հաղուստը շինելու համար բամպակը կարելի եղածին
չափ աման յօրինել, հիւսել, ոստայնանկել կ'աշխատէին :

Մարդկութեան յառաջադիմութեանց անընդհատ զարգացումը
պատմադիր չ'է ունեցած տակաւին : Տիւպարիներու, Բոնրատուր-
ներու, Թագաւորներու և իրենց արական և իգական պաշտօնեա-
ներու, Մոնմօրանսիի օրիորդ Տուտրաոյի (d'Houdedot), օրի-
որդ Տը Ղեսբինասի վարուց պատմադիրներ գտնուեցան, բայց ստո-
րին աշխարհի մէջ կատարուող այն մեծ կերպարանափոխու-
թեամբ մէկը չ'էր զբաղէր : Ինչպէստայի մէջ գինեվաճառ մը
Թովմաս Մուրի լոյս կ'ուտար : Հեռաւորութիւնները կարճեցնելու
միջոց կը խորհէին. երկաթուղիներ հնարած էին, որոնց վրայէն
ձիերու քաշած կառքերը կը դըրէին. ժամանակը՝ այն ահագին
հարստութիւնը կը շահէին :

Սթիվոնսըն իւր խոնարհ և համեստ դիւղին մէջ տեղը տխուր և
վշտալի մթնոլորտի մը մէջ կը մեծնար կիրակնօրը եկեղեցին եր-
թալով, աշխատելով, այլ առանց կարդալ գրել դիտնալու : Պա-
րագաներու գէմ մարանչելու, ինքը իւր գործերու զուակը ըլլալու
ծարաւի՝ անձնական մշակումի դասը ընդունեց, կանուխ աշխատիլ
սկսաւ : Աշխատութիւն, տրամալի, այլ պիտանի բառ, ստորին
ժողովուրդներու անհաճոյ, այլ բարձրագոյն և կրթեալ ժողովուրդ-
ներու սիրելի և անոյշ : Գնա՛, Նարոյի, հոն բնական կերպարան-
քի տակ աշխատութեան ամենամեծ թշնամին պիտի տեսնես, այն
է լոճարոնէն. ճշգրիտը խօսելով Նարոյի թագաւորին այս հպատա-
կը ամբողջ մեթօսի մը խորհրդական նշանն է, բանաստեղծներու
նման սնտաի յոյսերով իւր անձը կ'ափովիէ, սակայն կը դողնայ,
կ'սպաննէ, սուտ և պատիր կրօնք մը կը քարոզէ : Ընդհակառակն
Սկոլաիոյ, Ամերիկայի մէջ աշխատիլը ապրիլ է, ապրիլը վայելել,

աշխատիլը էութիւնը զարգացնել է ու եթէ այս երկիրներու մէջ
 չ'են քարկոծեր, գէթ աշխատութեան գէմ չարախօսողը ազգու կեր-
 սով կ'արհամարհեն: Ադէկ կրթութիւն առած ժողովուրդները աշ-
 խատութիւնը կը սիրեն: անկիրթ ժողովուրդները միայն զայն կ'ա-
 տեն: Աշխատութիւնը սիրող ժողովուրդի մը զաւակները լնտանիքը
 կը մեծցրնեն և մարդկութեան յառաջադիմութեանց կը նպաստեն:
 Քիթ պաշտօնեայ էր, Սթիվընսըն տասներկու տարեկան էր ու
 նախ օրը չորս փող կը շահէր, յետոյ տասներկու տարեկան եղած
 ատեն՝ մէկ շըլին (վեց դահեկան): Երկաթուղին, անխաճանքը իւր
 ուշը կը դրաւէին: գործնականով մեքենան, ջրհանի միջին ձողերը
 և կատարելագործելի անիւները կը վնէր: Աշխարհի հանձարը մէրն
 է, մեքենայի սէրը ունէր: Մեքենական ազդեցութեանց զօրութիւնը ի-
 լնն ուսումն միակ և հաստատ առարկան ընելով, ուշադրութեամբ
 համբերութեամբ և յարասեութեամբ փորձառու Սթիվընսըն իւր
 քննութեանց հեռեանքը՝ ի գործ դնելու առիթը գտաւ անյապաղ:
 Աիլսընի ջրհանին մեքենան կոտրած էր: Տասներհինգ տարեկան հա-
 մետ գործաւորը իւր գիտութեան վրայ վստահ, զոր չէ թէ գիր-
 քերէ քաղած՝ այլ գործնականի արդիւնքն էր, զայն նորողել կ'ա-
 ռարկէ ճարտարապետին: «Աթէ յաջողիս՝ տասը շըլին պիտի տան
 քեզ,» կ'ըսէ ճարտարապետը: Աթ օր ետքը մեքենան կը բանէր:
 Իւր հոշակը կ'սկսէր: Մեքենաներու տքթորը, ջրհաններու բծիշ-
 կը կը կոչէին զինք: Իրեն համար հարստութիւն մ'էր այս, վիան
 զի օրը երեք շըլին կը շահէր: Սթիվընսըն տասներկու տարեկան
 եղած ատեն կարգալ և ստորադրութիւնը գնել կը սորվի:

Իւր գոյութեան մէջ մեծ շարժում մը երևան կ'ելլէ, սիրահար
 կ'ըլլայ: Ըստերը պիտի կարծեն թէ վտանգաւոր ձերսով մը, ու-
 ռանց հաշուելու, յանդուգն և ժպիրհ սիրահար եղած է: ստուղիւ
 երկու գեղեցիկ աչերու սիրահարեցաւ, որ նոյն իսկ բէռն մը (քսան
 փարայ) չ'ունէին: Մեր բարուց մէջ ոճիր մ'է այս: Ֆրանսայի
 մէջ սէրը, ինչպէս ըսաւ Պենտամեն Բօնսթան, լոկ ինչքերու ի-
 րար յաւելումն է, ինչպէս նաև Ամերիկացի մը աւելի ազգու կեր-

պով ըսաւ . Պ . Ինչ առին կամուսնանայ Օրիորդ Ինչ առին հետ :
Այս ալ Անկլիոյ Ֆրանսայի վրայ ունեցած առաւելութեանց մին է :

Մեր գրացիները ամուսնութիւնը իբր երջանիկ և հաճոյական ընկերութիւն մը կը նկատեն , որուն պաշտօնն է կեանքի բեռը , այսինքն գծուարութիւնները իրարու մէջ բաժնելով թեթեւցնել . ընդհակառակն մեր մէջ երեւ ՝ Կեանք մէկ գործ է . սիրոյ ամուսնութիւնը ստակի ամուսնութեանէն այնչափ նախադաս է՝ որ ասոր վրայօք խօսքը երկարելը ծաղրելի կ'ըլլայ : Անհատութեան զգացումը ունեցող ամեն մէկ մարդ ասիկա կը հասկնայ :

Սթիվընսըն և իր կինը միլիօնի տէր էին առանց դիտնալու . սրտի այծը և հարստութիւնը ունէին : Այս մասին Ֆրանսայի մէջ սոյն գաղափարները այնչափ թիւր ըմբռնած են՝ որ կը վախենք թէ մեր միտքը չհասկցան . այս ամուսնութիւնները բազմաթիւ ըլլալով՝ մէք զբամանքը կը գրաւեն և Անկլիոյ մէջ ամենէն աւելի ազդեցութեան տէր աւլօններէ մին տեսայ որ քառասունի չափ սիրով միայն միացած ամուսնու կը պարունակէր , որոնք մեր օժիտի և ստակ բերելու շահագիտութեանց օտար կը պանուէին :

Հիւսիսի այս հզօր և անձնական ժողովուրդներու համար կլինը սանդուղի աստիճան մը չ'է . ընտանիքի երաշխաւորութիւնը և հրապոյրը , երջանկութեան գրաւն է . հողի մը ընտրած է զինքը իւր հողին համար և չ'է թէ իւր արկղին , հզօր թէութիւններ որ ընկերութեանց ապագային վրայ ազդեցութիւն կ'ունենան :

Անկլիան , մարդկութեան գործունեայ հայրենիքը , իւր գործունէութեամբը միայն Արտ գարէն ՚ի վեր կը մեծնայ :

Սթիվընսըն , մեր դիւցազնը , իւր ամուսնութեամբը երջանիկ եղաւ : Յաղթելու համար նոր միջոց մը գտաւ , սիրով և զօրութեամբ սարաւազէն սղքատութիւնը սանձելով՝ ամեն բանի բժիշկը եղաւ , առողջութեանէ զատ . կօշիկները , ժամացոյցները , շամփրաշուրջերը նորոգեց , ինչպէս Ալիսընի ջրհանը նորոգած էր :

Քիչ ատենէն իւր համբար տարածուեցաւ և իւր դիւղին սահմանները անցնելով Մանչեսթրի գործատէրերը համեստ գործա-

ւորին նուաստ բնակարանը բերու ։

Այս գործատէրերը կեանքը կրկնապատկող շարժումը փութացնելու քաղձանքով եկան այս երջանիկ ամուսինը գտնելու թէև աղքատ ու երկաթուղին բարելաւելու միջոց մը խնդրեցին ։

Սթիվընսըն մակաբերած էր թէ ճնշուած գոլորշին հետ միացած և կարդադրուած ախօսաձև ճեղքուածը հրաշալի հետեանքներ պիտի արտադրէր ։ Այս գիւտին հնարիչը ինքն էր ։ Ո՛չ վասն զի նորահնար գիւտերը բուն մէկու մը չեն սեպհականիր, այլ հասարակաց ստացուածքն են. անոնց կատարելագործութիւնը, անոնց մասնաւոր գործածութիւնը միայն անձնական են ։ Բաղմահմուտ անձ մը, Պ. Էտուար Փուրնիէ, Հիւ-Նոբլ (Vieux-Neuf) կոչուած երկու հասոր գիւղին մէջ կը հաստատէ թէ նորահնար գիւտ չկայ քնաւ. ելեքտրական հեռագիրը, հեռագէտը հին Աեզտացւոց մէջ կային և շոգեշարժ մեքենան ինչպէս մեր նախորդ ճառերու մէջ ձեզ լրջիք Բալէօլոդոսներու օրով Բիւզանդիոյ մէջ կար ։ Տարօրինակ և զարմանալի բա՛ն ։ Այդ մեքենան, որ այսօր օգտաւէտ և ժողովրդային գործերու կը ծառայէ՝ հնութեան մէջ հարուստ եպիկիւրեանի մը հեշտաւէտ հաճոյքներու կը ծառայէր, շոգեշարժ մեքենային ուղաւորներ էր սեղանատան մը սպասներու դարանը բանալ, տէրը իւր գերիններու նայուած քէն խորշելով՝ զսպանակ մը մղելը միայն կը բաւէր. զսպանակը մեքենան կը շարժէր. ասիկա իւր մղումի գորութեամբը դուռ մը կը բանար, ուղուած կերակուրը իւր վրայ կը բեռնաւորէր, իւր ցանկասէր ախրոջը համը, խուլ և կոյր գերի մը ։ Այս ժամանակներս մաքրութիւնը ամեն յառաջագիմութեան լծնամբ՝ եսական բարւոքումը միայն վայելել կը խորհէր ։ Հոգիէ մեծութիւնը և ոյժն է, յարատեւութիւնն է որ նորահնար գիւտերը կ'որոշեն ։

Օրինակ յառաջ բերենք Բաբենը (Papin) բողոքական, դժբաղդ, տարագիր, արտում և թշուառ, որ իւր նորահնար գիւտը չվայելեց, Վատ (Watt) որ ասկէ երջանիկ չեղաւ. Սթիվընսըն մեքենաներու բժիշկը, փորձառու և վարժ անձ մը, որ շոգեշարժ մեքե-

հային ճնշուած ոյժին օղտակաառութիւնը կը փնտռէր և այս միայն իր ուշը գրաւած էր :

Իրմէ առաջ հասնական գիտուն մը , գիտուններու ամենէն յոռի աեսակը , անոնք որ չեն կրնար բան մը հնարել , Թրեվիթիք (Trewithick) ճարտարապետը ապարդիւն փորձերէ վերջը ահօսաձև ճեղքուածին փայ անիւներու նուազ յարելութիւնը բարձրագոյն ոյժ ունեցող մեքենաներու դործածութեան իբր խոչնդոտ երևան հանեց :

Սթիվընսըն պարզ գործաւորը , այլ փորձ և վարժ ահօսաձև ճեղքուածին և դողորշիին մէջ տեղի յարելութիւնը իբր կարելի կը յայտնէ :

Հողեկառք մը կ'առարկէ , զինքը կ'ատեն ու կ'արհամարհեն . ընդ-դիմութիւնը մարդկութեան մէկ օրէնքն է : Ճակատադրի հպատակելու մէջ է որ քրիստոնէական վսեմութիւնը կ'երևի :

Մեքենաներու նկատմամբ մրցում մը կը բացուի . Սթիվընսըն հար-իւր անկլիական ոսկիի գինը կը շահի . իւր կինը դեռ նոր մեռած էր և իւր ցաւը իւր աշխատութիւնները երկու տարիի շափ ընդմիջեց . այլ ինքը կորովի հողի մ'ըլլալով յուսահատութեան առջև չ'ընկրու-կիր , կռիւր կը շարունակէ , կը նկրափ անդուլ ու յաղթական և իւր գեղեցիկ խօսքին համեմատ՝ հուսկ յետոյ ահօսաձև ճեղքուածին ա-մուսնութեանը կատարել կը յաջողի :

Սթիվընսըն միշտ այս սիսթեմի կողմնակից էր և ասով հարստա-ցաւ : Այնուհետև սկսաւ իւր Ռոպերթ գաւակին գատիարակու-թեանը աշխատիլ , վասն զի ընտանիքը սիրելի մարդկութիւնը սիրել է :

Սակայն արդիւնքը ձեռք ձգելէ առաջ Հասարակաց խորհրդարա-րանը իրեն հակառակ էր . նոյն իսկ Ռոպերթ Բիլ , այն մեծ քա-ղաքագէտը , Իռլանտայի և Անկլիոյ փրկիչը Սթիվընսընի նկատմամբ զոյր էր :

Գէորդի առաթուր կոխելով անդոսնած այն բաղմամբիւ խոչնդոտ-րու նկարագիրը իւր գաւակին դրած մէկ նամակին մէջ կը տեսնենք . «Մէկը զիս կը ծաղրէ , միւսը զիս կը թշնամանէ , կը նախատէ , եր-

ընդ մը կը հրաւիրէ զիս զիւցազներդութիւն մը գրելու, որնոր մեքենայի մը քայլել սկսելուն չափ օգտակար գործ մ'է. մտիկ կընեմ առանց սրտասխանելու: Աստուած զիտէ թէ հանդուրժելու համար որչափ արիութիւն պէտք է երբ կը լսեմ թէ զիս մեապարծ, անձընդով, շողակրատ, խաբերայ, ժլատ մարդ կ'անուանեն:»

Այլ Սթիվընսըն իւր զօրութեանը վրայ վստահ և այդ ատելի և հախանձոտ աղաղակներու ականջ չկատելով Լիվըրբուլէ Մանչեսթեր երկաթուղի մը շինելու կը ձեռնարկէ և իր յղացած յանդուգն խորհուրդին հետ կ'առաջարկէ որ գիծը Քամոզի (Chamose) խոր և շարժուն ճահիճներու մէջէն անցնի: Ամեն երկրաչափները զինքը թէև անմիտի տեղ կը դնեն, այլ Սթիվընսըն այս ամենէն չշփոթիր: Ովկիանը, կ'ըսէր ինքնիրեն, ամենէն ալեծուփ ճահիճներէ հարիւր անգամ աւելի կ'ալեկոծէ, այլ սանձուած է և մեր նաւերը մեծ դիւրութեամբ ու մեղմօրէն կը տանի. ինչո՞ւ համար Քամոզ մեր շողեկառքերը չպիտի տանի:

Իւր յարատեութիւնը և ջանքը յաջողութեամբ պսակուեցան: Իւր հռչակը ամեն տեսակ յարձակումներէ ապահով էր. Առանց սրհափառութեան և համեստօրէն, իւր սիրելի կնոջը յիշատակին և իւր Ռոպերթ զաւկին նկատմամբ կաթոգին սիրոյ հաւատարիմ, որնոր Անկլիոյ ամենէն մեծ ճարտարապետներէն մին պիտի ըլլար, Սթիվընսըն իւր յաղթութեանց ատպարէզը կը թողու և իր հայրենիքը այս երկաթեայ ճամբաներով զարգացնելէ յետոյ խոնարհ գիւղի մը մէջ կը քաշուի նոր ժամանակներու էն գիւցազնական հողիին անմահ յիշատակը թողլով:

Իւր ամառանոցին մէջ հանդիստ մեռաւ բնութեան խաղաղութեան մէջ, մարդկութեան անհամար ծառայութիւններ մատուցանելէ ետքը, ինքը իւր գործերու զաւակը, արդի կեանքի ամենէ մեծ օրինակը, յիշատակով անմահ, այլ առանց ազդատոհմի նշան ունենալու, բայց իւր հանձարովը, իւր բարոյական գործունէութեամբը իւր յարատեութեամբը աշխարհս կերպարանափոխ ընելով: Աւհ կուի, որնոր արդի մեծ ասպետութեան կը վերաբերի և միջին դա-

րու ասպետութեան անօգուտ քաջադործութիւնները շատ Կտ կը ձը-
դէ :

Քնչպէս ձեզի ըսի և ինչպէս մեր ճառերու ընթացքին մէջ ստեպ
կրկնեցի կամքի ոյժը մեծ մարդերու արարիչ գործակատարն է , գի-
տութիւնը չ'է որ մարդիկը մեծ կ'ընէ , այլ գործունէութիւնը և
յարատեութիւնը :

Նարոյէօն իւր տիեզերականութեան վրայ հիացող իր փառաբուշներու
մը ըսէր . «Իմ կամքէս է որ ոյժ կ'առնեմ :» Իւր մեծ ոսոխը Աելինկ-
թոն գութսը իր անհաստական գորութեան զգացումը կը տածէր . գի-
տէր անիկա մէկ կէտի վրայ ամփոփուիլ , ինքզինքին դառնալ և 'ի
հարկին կեղծել իսկ : Օր մը Աայլքի , Սկովաիացի նշանաւոր պատ-
կերահան , այս ալ իւր գործերու զաւակը , որ Էտինպուրկ ծնած էր ,
ապսպրուած պատկեր մը կը բերէ Աելինկթոնի . «Քնչ է պարտքս
«կ'ըսէ գութսը : — Հինգ հարիւր անկլիական ոսկի , կը պատասխա-
«նէ արհեստագէտը : — Հասէ : — Եթէ Ձեր Ասեմութիւնը պէտք
«եղած գումար չ'ունի իւր քովը , իւր կողմէն գրուած բառով մը
«կրնամ սեղանաւորէն երթալ առնել : — Ա՛չ , կը պատասխանէ
«Աելինկթոն , ես ինքս պիտի վճարեմ , վասն զի երբ անմտութիւն-
«ներ կը գործեն աղէկ է զանոնք ամեն մարդու չ'զիտցնել :»

Ար ցախիմ , Պարոննե'ր , որ ժամանակը և իմ գործերս չ'են
ներեր այս ճառախօսութիւնները շարունակեմ , զորոնք այնչափ հա-
մակրական կերպով մտիկ ըրիք . Ուր էր թէ ձեր մէջէն մէկու մը
ներչնչած ըլլայի որ Իրե'նց Գործերու զաւակներուն պտտմութեան ձեռ-
նարկելու ոյժը և գաղափարը ունենար : Այն ատեն մեր հայրենեա-
լը մեծ ծառայութիւն մատուցած պիտի սեսկէի ինքզինքս :



Ինչպէս կը տեսնէք Պ. Ֆիլարեթ Շաղլը, այն համեստ գործաւորը, Սթիվընսընը Գրիգոր Ա. մեծ պապէն նախադաս սեպելով անոր վրայ միայն ճառեց և վերջ տուաւ իւր խօսքին :

Գէորգ Սթիվընսըն պարզ գործաւոր մ'էր, այլ խելացի, հանձարեղ : Ութ տարեկան հասակին մէջ եղն կ'արածէր, 19 տարեկան հասակին մէջ կարդալ դրել չ'էր դիտեր և սորվեցաւ : Քրտան տարեկան եղած ատեն կարդաւ ելով զաւակ մ'ունեցաւ, որ յետոյ Անկլիոյ և համայն աշխարհի առաջին ճարտարապետներէն մին եղաւ : Տեսէ՛ք թէ նոյն ինքն Սթիվընսըն ինչպէս իւր պարասոյ ժամերը կանոնէր :

Օրուան տաժանելի աշխատութենէն ետքը դիշերը քունին դէմ դնելով իր դրացիներուն ժամացոյցները և կօշիկները իսկ կը նորոգէր, բայց արծաթի սէրը չ'էր որ այսպէս չափազանց կ'աշխատընէր զինքը, այլ ասով իւր զաւակը, Ռոպերթը կը դաստիարակէր, վասն զի ինքը ասոնցմէ զուրկ ըլլալով շատ դանդաղ կերպով կը յառաջագիւմէր :

Սթիվընսըն իւր զաւակին մէջ ճշգրիտ վարձատրութիւն դտաւ : Ռոպերթ Անկլիոյ ամենէն հոշակաւոր ճարտարապետը ըլլալէ ետքը հարստացաւ, զօրացաւ և մինչև անդամ խորհրդարանի անդամ եղաւ, այլ չէր մոռնար բնաւ թէ պարզ գործաւորի մը զաւակ էր ինքը :

1859ին մեռնելով Վեսթմինսթըրը եկեղեցւոյն դաւիթը թաղեցին զինքը, ուր կը հանդէս Անկլիոյ թաղաւորներու մեծ մարդերու ուկրօտին :

Ասկէ շատ տարիներ առաջ Սթիվընսըն և իւր զաւակը Ռոպերթ Քրանսայի մէջ նշանաւոր դիանականներու, արհեստագէտներու մէջ հացկերոյթին ներկայ գտնուելով հոն տեղ իրեն համար կեցցէ՛ներ գոչեցին և ընդհանուր կերպով ծափահարեցին :

Գէորգ բերկրութենէն կ'ուլար, վասն զի Անկլիոյ մէջ իւր յարգը և արժեքը չ'էին ճանչեր դեռ :

Իմ խօսքիս ալ վերջ տալու ատեն ըսեմ նաև թէ աշխարհիս մէջ թէև հազարաւոր դուքսեր, կոմսեր, փաշաներ, պէյեր, էֆէնտիներ կան, բայց Գէորգ Սթիվընսըն մէկ հատիկ է և ուր որ երկրիս երեսը երկաթուղի մը շինած են և անկէ օդուտ կը քաղեն՝ հոն այդ երկաթուղիները անոր յիշատակին համար կանդնուած մէյ մէկ անմահ արձաններ կրնան սեպուիլ :

Մենք ալ Իզմիրի մէջ անոր համար կանդնուած յիշատակարաններ ունինք, այն է Այտընի և Քասապայի երկաթուղիները : Ուրեմն փառք տանք մենք ալ Սթիվընսընի յիշատակին և մաղթենք որ հայու թիւնն ալ այսպիսի զաւակներ ծնելով՝ անոր պէս անմահութեան արժանանան :

ՎԵՐջ



«Ազգային գրադարան»



NL0191768

